

Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

1926 փետրվար 3 Վախճանվեց գերմանացի քրիստոնյա առաջնորդ Յոհաննես Լեպյուսը, որը փորձում էր աշխարհին տեղյակ պահել թուրքերի կողմից հայկական ցեղասպանության մասին՝ նորը չկրկնելու ակնկալիքով: (Ծնվ. 1858 թ.-ին):

փետրվար 21 Ծնվեց Սետաքսյա Սիմոնյանը (դերասանուհի):

ապրիլ 20 Երևանում բացվում է եզդիների համահայաստանյան համագումարը:

մայիս 16 Տեղի է ունենում Երևանի առաջին հիդրոէլեկտրակայանի հանդիսավոր բացումը, ուր ճառով հանդես են գալիս Գ. Օրջոնիկիձեն, Աղանալի-Օղլին, Շ. Էլիավան և ուրիշներ:

օգոստոս 26 Բացվում է Արզնի առողջարանը:

հոկտեմբեր 9 Արտասահմանից Երևան է վերադառնում անվանի բանաստեղծ Ավ. Իսահակյանը:

հոկտեմբեր 22 Լենինականում տեղի է ունենում ուժեղ երկրաշարժ:

նոյեմբեր 29 Տեղի է ունենում Երևանի ձեթ-օձառի և փայտանշակման գործարանների հանդիսավոր բացումը:

նոյեմբեր 29 Ծնվեց հայ նկարիչ Գրիգոր Խանջյանը:

1927 ապրիլ 30 Շահագործման է հանձնվում Երևանի կարբիդի գործարանը:

հունիս 29 Հայաստան է ժամանում ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Ի. Կալինինը:

հուլիս 24 Տեղի է ունենում Ձորագետի հանդիսավոր հիմնադրումը:

հոկտեմբեր 20 Խորհրդային Հայաստան է ժամանում ֆրանսիացի նշանավոր գրող Հենրի Բարբյուսը:

նոյեմբեր 24 Երևանում վախճանվեց բանաստեղծուհի Շուշանիկ Կուրդիյանը: (Ծնվ. 1876թ.-ին):

1928 մայիս 7 Երևանում վախճանվեց ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ականավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը:

հուլիս 20 Ծնվեց տաղանդավոր նկարիչ Սիմաս Ավետիսյանը: 1975թ.-ին սպանվեց Խորհրդային գաղտնի ոստիկանության կողմից:

հուլիս 25 Խորհրդային Հայաստան է ժամանում պրոլետարական գրող Մաքսիմ Գորկին:

հուլիս 29 Ծնվեց հայ կոմպոզիտոր, դիրիժոր Կոնստանտին Օրբելյանը:

հոկտեմբեր 6 Տեղի է ունենում Երևանի

բանվորական համալսարանի հանդիսավոր բացումը:

նոյեմբեր 1 Լենինականում բացվում է Հայաստանի պետական երկրորդ դրամատիկ թատրոնը:

նոյեմբեր 8 Երևանում տեղի է ունենում Անդրկովկասի անասնաբուժական ինստիտուտի հանդիսավոր բացումը:

նոյեմբեր 17 Երևանում բացվում է Հայաստանի կոլտնտեսությունների առաջին համագումարը:

նոյեմբեր 29 Տեղի է ունենում Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ գործարանի և հիդրոէլեկտրակայանի հանդիսավոր բացումը:

դեկտեմբեր 23 Ծնվեց հայ խմբավար, դիրիժոր, մանկավարժ Հովհաննես Չեֆիջյանը:

1929 մարտ 25 ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատը հաստատում է քրդական այբուբենը:

մարտ 27 Սարսելում վախճանվեց ուսուցիչ, հրապարակախոս և քաղաքական գործիչ Սիմաս Չերազը: (Ծնվ. 1852թ.-ին):

ապրիլ 7 Բացվում է ՀԽՍՀ խորհուրդների VI համագումարը, որտեղ հաստատվում է ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլանը:

հունիս 17 Ծնվեց աշխարհի շախմատի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը:

սեպտեմբեր 15 Երևանում բացվում է «Կորչի անգրագիտությունը» ընկերության հանրապետական առաջին ամագումարը:

1929 սեպտեմբեր 29 Երևանում մահացավ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը: (Ծնվ. 1864թ.-ին):


հոկտեմբեր 23 Երևանում վախճանվեց ՀԽՍՀ ժողովրդական նախագահի տեղակալ և լուսժողկոմ Ասրանազ Մռավյանը: (Ծնվ. 1885թ.-ին):

նոյեմբեր 29 Տեղի է ունենում Լենինական-Արթիկ երկաթգծի հանդիսավոր բացումը:

նոյեմբեր 29 Բացվում է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնը:

դեկտեմբեր 1 Սկսում է գործել Քանաքեռի նոր ռադիոկայանը:

դեկտեմբեր 14 Սարսելում (Ֆրանսիա) վախճանվեց լեզվագետ, թարգմանիչ Մեսրոպ Նուպարյանը: (Ծնվ. 1842թ.-ին Ձմյուռնիայում):



(Շարունակելի)

ԱՇՆԱՆԸ ՉԵԽԻԱՅԻ ՍԵՆԱՏԸ ԹԵՐԵՎԱ ՃԱՆԱԶԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չեխիայի Սենատն աշնանը ամենայն հավանականությամբ կընդունի 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանությունը ճանաչող հայտարարություն: Այս մասին երեկ ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ներկայացուցիչների հանդիպմանը հայտնել է Չեխիայի Հանրապետության Սենատի համարժեք հանձնաժողովի ներկայացուցիչ Յարոմիր Շտեյնման: Վեջինս, Չեխիայի հայ համայնքի նախաձեռնությամբ եւ Չեխիայի նախկին նախագահ Վացլավ Հավելի հովանավորությամբ երկու ամիս առաջ Սենատում կազմակերպվել է Հայոց ցեղասպանությանը նվիրված կոնֆերանս:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԱՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎՈՒՄ Է ԲԱՂՑԿԵՂԻ 10 ՍԼՆ ՆՈՐ ԴԵՊԸ

Մասնագետները կարելոքում են հիվանդության կանխարգելումը

Այս տեղեկությունը պատկանում է առողջապահության համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), որի կանխատեսմամբ հնարավոր է, որ 2020 թ. հիվանդացությունը հասնի մինչեւ 20, իսկ մահացությունը 12 մլն-ի: Հայաստանում հաշվառված են 25 հազար քաղցկեղով հիվանդներ:

Տնտեսապես զարգացած գրեթե բոլոր երկրներում աճում է թոքի քաղցկեղով հիվանդացությունը, որը վերջին երկու տասնամյակում չարորակ ուռուցքների ընդհանուր կառուցվածքում գրավում է առաջին տեղը՝ աշխարհում 1 մլն դեպք: 2005 թ. մեր երկրում արձանագրվել է չարորակ նորագոյացություններով հիվանդության 6 հազար 174 առաջնային դեպք, որից հազար 64-ը՝ թոքի քաղցկեղ: Հայաստանում նախորդ տարի յուրաքանչյուր հարյուր հազար բնակչի հաշվարկով թոքի քաղցկեղը կազմել է 33,1 դեպք: Ցավալիորեն թոքի քաղցկեղից մահացությունը շատ բարձր է եւ հասնում է 85 տոկոսի:

Հիվանդության ահագնացող աճին ահագնազում են նաեւ ռուս եւ հայ մասնագետները, որոնք երեկ ուռուցքաբանության ազգային ինստիտուտում երկօրյա գիտաժողով էին հրավիրել «Թոքի քաղցկեղի ախտորոշման եւ բուժման ժամանակակից մոտեցումները» թեմայով: Ռուս եւ հայ առաջատար ուռուցքաբանները, վիրաբույժները, քիմիաթերապեւտները եւ ռադիոթերապեւտները ներկայացնում էին հիվանդության զարգացման ընթացքը, վիճակագրությունը, բուժման մեթոդներն ու կանխարգելման միջոցները: Ռուսաստանի ուռուցքաբանության գիտական կենտրոնի պրոֆեսոր Անդրեյ Վաժինինը մեզ հետ զրույցում նշեց, որ աշխարհում գերակշռող թոքի քաղցկեղի հիվանդությունը խիստ անհանգստացնող է, եւ այս հանդիպումը երկու երկրների փորձի փոխանակման առումով շատ կարելոր է: Պրոֆեսորը հիվանդությունից խուսափելու լավագույն միջոցը համարում է կանխարգելումը: Ինչ վերաբերում է բուժմանը, ապա Հայաստանի ուռուցքաբանների ասոցիացիայի նախագահ Գրիգոր Բադալյանը նշեց, որ մեր երկրում հիվանդության բուժման բոլոր մեթոդները՝ վիրաբուժական, ճառագայթային, քիմիաթերապեւտիկ, բարձր մակարդակի վրա են:

Վերջինս նշեց սակայն, որ մենք չունենք հիվանդության ախտորոշման նորագույն սարքավորումներ: Ուռուցքաբանության ազգային ինստիտուտի տնօրեն Հայրապետ Գալստյանի տեղեկացմամբ, հանրապետության մարզերում կատարվել են հետազոտություններ, կազմվել է կանխարգելման ազգային ծրագիր: Տնօրենն ընդգծեց, որ որոշ մարզերի բնորոշ են տարբեր քաղցկեղներով հիվանդության դեպքեր. օրինակ, Շիրակի մարզում հիմնականում արձանագրվում են ստամոքսի, հաստ աղիքի եւ վերջնաղիքի քաղցկեղներ:

Թոքի քաղցկեղի առաջացման հիմնական պատճառը ծխելն է՝ 80 տոկոս, իսկ մյուս դեպքերում հիվանդության առաջացումը կապվում է բնակարաններում եւ աշխատավայրերում ռադոնի բարձր պարունակության, ասբեստի փոշու շփման հետ: Հիվանդության կանխարգելման ամենաարդյունավետ միջոցը մասնագետները համարում են չծխելը, ռադոնի դեմ պայքարը, ամենօրյա կանոնավոր օդափոխությունը, բնակարանների եւ երկաթբետոնե ծածկերի ներկումը կամ պաստառապատումը, ասբեստի փոշու եւ ծանր մետաղների հետ շփումից զերծ մնալը, ճիշտ սնունդը (մասնագետները կարծում են, որ մրգի եւ բանջարեղենի բավարար օգտագործումը նվազեցնում է ռիսկը), ինչպես նաեւ կանխարգելիչ քննությունները:

ԱԿԵՂՂԱՄԱ ԱԳԱՐԱԿՈՒՄ ԿԱՆՎԱԾԸ



2005 թվականի վերջին օրերին, սուրբ Ջատկի նախօրյակին, Վաշինգտոնում հրատարակվեց աստվածաշնչյան գրականության ամենակարեւոր գործերից մեկը՝ Յուդայի Ավետարանը, որը հավակնում է այս ուղորտի ամենանշանավոր հայտնագործությունը լինելու: ԱՄՆ-ի Աշխարհագրական ազգային ընկերության հրատարակած այս փաստաթուղթը ներկայացնում է Հիսուս Քրիստոսի երկրային կյանքը ըստ Յուդա Իսկարիովտացու: Գիտնականները պարզել են, որ գործն ստեղծվել է 220-340 թթ.:

Կաշվե պատյանի մեջ առնված պապիրուսե ձեռագիրն ունի 62 թերթ, որն ուսումնասիրելու համար պետք էր այն նախ եւ առաջ մաքրել դարավոր փոշուց եւ ցեխից, համադրել փոքրիկ կտորների վերածված հազարից ավելի պատառիկներ: Տեքստը գրված է հին դպտիերենով, որի վերծանումը ի զորու էին կատարել միայն հազվագյուտ մասնագետներ, որոնց թվում է Ժնեւի համալսարանի պրոֆեսոր Ռուդոլֆ Կասսերը: Պահանջվեցին տարբեր երկրների պապիրուսագետների եւ վերականգնողների ջանքերը, որպեսզի վաղ քրիստոնեական շրջանի այս փաստաթղթի գոնե 70 տոկոսը հասանելի լիներ թարգմանության համար:

Հայտնագործություններ, սենսացիաներ Ձեռագրի բովանդակությունն իսկական սենսացիա եղավ: Յուդա Իսկարիովտացու (Կարիովտ քաղաքում ծնված Յուդայի) կերպարը ներկայացվում է բոլորովին այլ լույսի տակ: Կանոնիկ Ավետարաններում ասվում է, որ Գեթսեմանիի այգում Յուդա Իսկարիովտացին մատնում է Հիսուսին՝ երեսուն արծաթ վարձքի դիմաց: Այս Ավետարանում Յուդան ներկայացվում է որպես Տիրոջ ամենավիրաված առաքյալներից մեկը, ով Աստծո կամքն է կատարում: Նա կոչված է «օգնելու Հիսուսին՝ երկրային շապկից ազատվելու», որպեսզի իրականացվի համընդհանուր փրկության համաշխարհային ողբերգությունը:

Յուդայի Ավետարանի հեղինակը փորձում է ապացուցել, որ ոչ մի մատնություն չի եղել, այլ Յուդան իր ուսուցչին հռոմեացիներին է հանձնել եւ նրան մահապատժի տարել Հիսուս Քրիստոսի ուղղակի ցուցումով: Հենց Հիսուսն է իբր համոզել Յուդային, որ միայն իր խաչելույթամբ եւ խաչի վրա կրելիք տառապանքներով կարող է ձերբազատվել մարդկային ամեն ինչից, ցուցադրել իր աստվածային էությունը եւ քավել մարդկային բոլոր մեղքերը:

Ավելին, այս փաստաթուղթն հաղորդում է, որ Յուդան ավելին, քան որեւէ մեկը, հասկանում էր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ նախասահմանվածությունը, որի պատճառով էլ իր աշակերտներից միայն նրան էր Աստծո Որդին ընտրել հատուկ առաքելություն իրականացնելու համար: Այս Ավետարանի կարեւորագույն պահն է համարվում Քրիստոսին վերագրվող մի արտահայտություն, որը բացատրում է Յուդայի ընտրյալ լինելու հանգամանքը. «Դու կգերազանցես մնացյալ բոլորին, քանզի քեզ է նախասահմանված զոհաբերության տանելու մարդուն, որի մարմնում բանտարկված են ես»:

Այսպիսով, թարգմանիչների եւ ուսումնասիրողների խմբի ղեկավար Ռուդոլֆ Կասսերի կարծիքով, Քրիստոսը «խոսում է իր ցանկության մասին, որ մարդկային մարմնից իր ազատագրումն իրականացնելու ոչ թե թշնամին, այլ՝ բարեկամը: Իսկ քանի որ դա կարելի է անել միայն մեկ ճանապարհով՝ խաչելության դատապարտվելով, ապա նա՝ Հիսուսը «խնդրում է Յուդային՝ իր լավագույն բարեկամին իրեն «ծախել» կամ «մատնել»», եզրակացնում է Կասսերը:

Յուդայի Ավետարանի վրա կատարվող աշխատանքներն իրականացվում էին բացարձակ գաղտնիության պայմաններում: «Սա պայմանական փաստաթուղթ է, որը պատկանում է բոլորին, - հայտարարեց հին մշակույթի պահպանության «Միքենա» հիմնադրամի տնօրեն Մարիո Ժան Ռոբերտին: - Մենք չենք ցանկանում, որ այն տրվի կրոնական որեւէ խմբավորման»:

Այժմ Յուդայի Ավետարանը թարգմանվում է 18 լեզվով: Տեքստին կից ներկայացվում է փաստաթղթի ուսումնասիրության ողջ ընթացքը եւ նրա հայտնաբերման անչափ հետաքրքրական պատմությունը: Այստեղ տեղին է նշել, որ Նոր Կտակարանում չներառված Ավետարանական շատ պատմությունների հայտնաբերումները բոլորովին էլ եզակի չեն:

Դեռեւս 19-րդ դարավերջին անգլիացի հնագետներ Գրեկֆելլն ու Հանթը եգիպտական Օքսիրինխա տեղավայրի աղբանոցում բազմաթիվ պապիրուսներ հայտնաբերեցին: Դրանց մեջ փոքրիկ մի կտոր կար՝ 10X15 սմ չափսով: Հանքն ուշադրություն դարձրեց հունարեն տեքստով այդ փաստաթղթին, որում հիշատակվում էր «շյուղ» բառը: Դա հիշեցնում էր Ավետարաններում նշված միտքը («... Ինչո՞ւ քո եղբոր աչքի մեջ շիւղը տեսնում ես, իսկ քո աչքի մեջ

գերանը չես տեսնում, կամ ինչպե՞ս քո եղբորն ասում ես՝ թող որ համեն այդ շիւղը քո աչքից, եւ ահա քո աչքում գերան կայ: Կեղծաւոր, նախ հանիր քո աչքից այդ գերանը, եւ ապա յստակ կը տեսնես՝ քո եղբոր աչքից շիւղը հանելու համար»: Մատթեոս, Է, 3-5, ինչպես նաեւ՝ Դուկաս 2, 41-42): Հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ 8 հղումներ սկսվում էին «Հիսուսն ասաց» արտահայտությամբ, ընդ որում դրանցից 3-ը մինչ այդ հայտնի չէին ոչ մեկին: Հատկապես հետաքրքրական էր հետեւյալ հղումը. «Հիսուսն ասաց, որտեղ կլինեն երկուսը, նրանց հետ կլինի նաեւ Աստվածը, որտեղ կլինի մեկը, եւ ասում եմ, եւ նրա հետ եմ: Բարձրացրու քարը. եւ այնտեղ դու կգտնես Ինձ, կտրիր ծառը, եւ եւ այնտեղ եմ»:

Այսպես հայտնաբերվեցին հանրահայտ «Լոգիաները», կամ այլ կերպ ասած՝ «Հիսուսի ասույթները», որոնք գրի են առնվել Ք. ճ. հ. 200 թվականին, առավել հին աղբյուրներից: Այս հայտնագործությունը քրիստոնեության պատմությանը հետ տարավ ամենաքիչը 150 տարով: Մինչ այդ Հիսուս Քրիստոսի կյանքի պատմությունը վկայվում էր Վատիկանի եւ Սինայի հանգանակներով:

Սակայն քրիստոնեական պապիրուսուլոգիայում իսկական հեղափոխություն եղավ եգիպտոսում ղպտիական ձեռագրերի հայտնագործությունը:

«Սեւ հնագետները» եւ միլիոնատերերը

Կիպ կողաված կերամիկան, ավազը եւ բնավ անձրեւ չխոստացող երկինքը օգնեցին, որ անչափ հետաքրքրական փաստաթղթերը պահպանվեն 16 դար: Իսկապես հրաշք է. տեքստերից 39-ը, պարզվեց, բոլորովին անհայտ էին գիտնականներին: Ինչ որ ընկավ ուսումնասիրողների ձեռքը՝ ամբողջական գիրք, թե պապիրուսի փոքրիկ մի կտոր, որի վրա մեկ-երկու տառ կար եւ հնարավոր էր կարդալ ու վերծանել, ուսումնասիրվեց: Ձեռագրերի միայն տասներորդ մասն էր վնասված:

Ի դեպ ասենք, որ այս ամենի համար պետք է շնորհակալություն հայտնել մի համեստ գյուղացու: Փոքրիկ բլրի վրա նա հայտնաբերեց մեկ մետր բարձրությամբ կավե սափոր: Ջարդելով այդ սափորը, նա հայտնաբերեց կաշվե պատյանով փաթաթված պապիրուսե բազմաթիվ գրքեր: Հույս ունենալով ավելի թանկ վաճառել գտածոն, ֆելլաիը (հողագործը), ավելի փոքր կտորների մասնատեց հնադարյան պապիրուսները: Շատ բան, իհարկե, վնասվեց ու անհետ կորավ այս պատճառով: Հետագայում իշխանությունները բռնագրավեցին մշակութային այս գանձերը եւ հանձնեցին Կահիրեի Ղպտական մշակույթի թանգարան: Ինչ-որ կերպ այդ կողեքներից մեկը գնեց Կառլ Յուրկի Ցյուրիխի թանգարանը, վճարելով 35 հազար շվեյցարական ֆրանկ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի եռանդուն միջամտության շնորհիվ այս ձեռագրերը հրապարակվեցին 1972-1977 թթ.:

Հենց այդ ժամանակ էլ հայտնաբերվել է Հուդայի Ավետարանը: Անլեգալ, կամ ինչպես նաեւ նրանց անվանում են՝ «սեւ հնագետներից» ձեռագիրն անցավ եգիպտական հնությունների վաճառքով զբաղվող ոմն Արիանի ձեռքը: Այս անունը, հավանաբար, հնարովի է: Իր գործընկերոջ հետ նա ձեռագիրը հասցրեց Եվրոպա՝ վաճառելու նպատակով: Այդ ժամանակների համար պահանջվող հսկայական գումարը՝ 3 միլիոն դոլարը, հավանական գնորդներին ձեռք չտվեց, սակայն Ավետարանի մասին լուրը տարածվեց ողջ աշխարհում: Ինչ-որ մեկին նույնիսկ հաջողվեց հավաքել անհրաժեշտ գումարը, սակայն գործարքը չիրականացավ, եւ այս հազվագյուտ փաստաթղթի հետքերը մի քանի տարով կորան: Արիանը 1991 թվականին այն դրեց Լոնգ-Այլենդի նյույորքյան բանկ: Բայց ամերիկացի գիտնական Չարլզ Շեդրիկին հաջողվեց գաղտնի ծանոթանալ տեքստին եւ ձեռագիրը լուսանկարել: Նրան նույնիսկ հաջողվեց նորվեգ մի միլիոնատիրոջ հանդեպ՝ գնելու ձեռագիրը, սակայն նշանակված օրը Արիանը չներկայացավ ժամադրավայր: Լուր տարածվեց այն մասին, որ իբր Պարսկական ծոցում սկսված առաջին պատերազմը եգիպտացի արաբին ամերիկացիների նկատմամբ անվստահության տրամադրեց: Սակայն ամեն դեպքում ձեռագիրն արդեն հայտնվել էր շուկայում:

Հարցը լուծեց հուլանդացի Սիխել Ռիզը, որն, ինչպես ասում են, Ռուբենսի հեռավոր ժառանգներից էր: Անչափ կասկածելի վարքի տեր այս մարդը, որին որոնում էր Ինտերպոլը, այնուամենայնիվ, ազատ տեղաշարժվում էր աշխարհով մեկ: Իրականում Ռիզը հետեւում էր հազվագյուտ հնագիտական արժեքների առուվաճառքով զբաղվողներին՝ կատարելով ինչպես ՂՖԲ-ի, այնպես էլ Սքոթլենդ-Յարդի առաջադրանքները: Նրա շնորհիվ խորհրդավոր Ավետարանը ԱՄՆ-ի Ազգային աշխարհագրական ընկերության ֆինանսական օժանդակությամբ հայտնվեց հնագույն մշակույթի պահպանման «Միքենա» հիմնադրամում:

Անիծված առաքյալը

Հուդայի Ավետարանը հազիվ թե տեղ գտնի արգելված գրականության ցուցակում, գոնե՝ Վատիկանում: Նույնիսկ կանոնիկ Ավետարաններում աստվածաբանները բազմաթիվ հակասություններ են գտնում, բայց դա չի նշանակում, որ պետք է փոխել կանոնակարգման սկզբունքը: Աշխարհառջակ աստվածաբան Ջենոն Կոստիդուսկին ընդհանրապես այն կարծիքին է, որ «Հուդայի մասին եղած բոլոր պատմությունները հորինովի են: Ոչ մի Հուդա էլ գոյություն չի ունեցել: Այս միտքը հաստատելու համար մենք կարող ենք որպես կռվան բերել Պողոս առաքյալի վկայությունը: Կորնթացիներին ուղղված իր առաջին թղթում նա խոսում է խորհրդավոր ընթրիքի մասին... Այդ դեպքի մասին նկարագրության մեջ

Պողոսը որեւէ հիշատակում չունի Յուդայի եւ նրա մատնութեան մասին...»:

Հիսուսի հանդիսավոր մուտքը Երուսաղէմ կասկածի տակ է դնում Յուդայի համբույրը. ի՞նչ կարիք կար հռոմեական պահակախումբը ուղղորդել այն մարդուն ձերբակալելու համար, որին հենց նոր ողջունում էր ամբոխը: Սակայն Յուդայի գոյության ամբողջական ժխտումը նաեւ իր հակառակորդներն ունի:

Ավետարանիչները համամիտ են այն բանում, որ Հիսուսը գիտեր սպասվելիք տանջանքների մասին եւ աղոթքի էր նստել, սակայն նրա ուղեկից առաքյալները՝ Պետրոսը, Յակոբը եւ Յովհաննէսը քնով ընկան, թեւ խոստացել էին արթուն մնալ եւ նույնպէս աղոթել: Աստօծ Որդին ինքն էր առաքյալների ընտրությունը կատարել, հետեւաբար Յուդա Իսկարիովտացին էլ էր ընտրյալների թվում: Վերջինիս անունով նորահայտ Ավետարանում Յուդան մեծարվում է որպէս «սիրելի», քանի որ Հիսուսը նրա համար ամենադաժան առաքելությունն էր կանխատեսել: Ամեն մի առաքյալ իր թուլությունը, սակայն նաեւ իր առաքելությունն ուներ: Չնայած այն հանգամանքին, որ Պետրոսը երեք անգամ ուրացավ Ուսուցչին, այնուամենայնիվ դարձավ Եկեղեցու հիմքը: Ամեն ինչ նախապէս տեսնելով ու կանխորոշելով՝ Քրիստոսը չէր կարող սխալվել առաքյալներից որեւէ մէկի հարցում:

Կաթոլիկ եկեղեցու հովվապետ Բենեդիկտոս 16-րդի մտերիմ բարեկամներ, պատմության հարցերով պապական խորհրդի նախագահ, մոնսենյոր Վալտեր Բրանդ-Սյուլլերը եւ գրող Վիտորիո Մասուրին այն կարծիքին են, որ Յուդա Իսկարիովտացին «աստվածաբանական խարդավանքների» զոհ է դարձել, որն էլ ազդակ է եղել հակասեմիտիզմի ձեւավորման համար: Նոր պապը դրական է վերաբերվում Յուդայի Ավետարանի հրատարակմանը, իր գործունեության սկզբունքը համարելով քրիստոնյաների եւ հրեաների միջեւ հարաբերությունների հաստատումը: Դեռեւս Վատիկանի երկրորդ Տաճարում, 1962-1965 թվականներին, ընդունվել է հանրահայտ «Nostra aetate»-ը («Մեր կարծիքը») հրովարտակը եւ հրեական ժողովրդի վրայից հանվել է հավերժական անեծքը:

26 էջ ծավալ ունեցող Յուդայի Ավետարանի հեղինակն անհայտ է: Միակ բանը, որ հավանաբար կարելի է հայտարարել, Ավետարանը կապ ունի գնոստիկների հետ: Գնոստիկությունը քրիստոնեության ուղղություններից, սեկտանտներից մեկն է, որի հետեւորդները գտնում են, որ փրկության կարելի է հասնել իր մերձավորներին Քրիստոսի հայտնած գաղտնիքների բացահայտման շնորհիվ: Գնոստիկների կարծիքով, միայն այս գիտելիքներին տիրապետելով «մարդը կարող է ազատվել իր նյութական մարմնի բանտից եւ վերադառնալ իրական, հոգեւոր աշխարհ, որտեղ նա եղել է ինչ-որ

ժամանակ»:

Յուդայի կերպարը բազմիցս վերահիմաստավորվել է պատմական եւ գեղարվեստական ստեղծագործություններում: Այս իմաստով Յուդայի Ավետարանը հազիվ թէ «կրոնական խառնակչություն» ստեղծի աշխարհում: Սակայն այն անկասկած իր արժանի տեղն է զբաղեցնում պարականոն գրականության ընտանիքում:

Ավետարանի տեքստի ամբողջական վերծանումից, թարգմանություններից եւ հրատարակություններից հետո Ավետարանը հավանաբար հետ կվերադարձվի Եգիպտոսի Ղպտի արվեստի թանգարանին:

ՄԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Ավելի քան 14 տարվա ընդմիջումից հետո գործարկվեց Երեւան-Քաթուն երկաթուղային հաղորդակցությունը

ԵՐԵՎԱՆ, 19 ՅՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ավելի քան 14 տարվա ընդմիջումից հետո հունիսի 17-ին պաշտոնապէս գործարկվեց Երեւան-Քաթուն երկաթուղային հաղորդակցությունը: Երկաթուղու գործարկման համար պայմանավորվածությունները ձեռք էր բերվել 2005թ-ին Յայաստանի եւ Վրաստանի նախագահների հանդիպման ընթացքում, այս գործում մեծ ներդրում է ունեցել նաեւ Յայ-վրացական գործարար համագործակցության ասոցիացիան: Երկաթուղու բացման արարողությանը մասնակցելու համար Յայաստան էր ժամանել Վրաստանի տրանսպորտի զարգացման նախարար Իրակլի Չոգովածեի զխավորած պատվիրակությունը:

ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը երկաթուղու բացման հանդիսավոր արարողության ժամանակ հույս հայտնեց, որ երթուղին չի լինի ժամանակավոր, այլ կաշխատի անընդմեջ, եւ հայաստանցիներն առավել հարմարավետ պայմաններում կկարողանան մեկնել Վրաստանի ծովափնյա քաղաքներ հանգստանալու: Նախարարը հույս հայտնեց նաեւ, որ առաջիկայում նաեւ այլ քաղաքների հետ կվերականգնվի երկաթուղային հաղորդակցությունը: Ըստ նրա՝ չնայած շուրջ 180 ուղեւոր տեղափոխելու հնարավորություն ունեցող երթուղին կգործի ողջ ծանրաբեռնվածությամբ, այդուհանդերձ, ինքնածախսածածկ չի լինի: «Երկաթուղային ուղեւորափոխադրումներն ամենուրեք սուբսիդավորվում են պետության կողմից, եւ երկաթուղու եկամուտների մասին չի կարելի խոսել. սա պարզապէս երկու երկրների միջեւ պայմանավորվածությունների իրագործում է, որը հնարավորություն կտա հայաստանցի զբոսաշրջիկներին առավել հարմարավետ պայմաններում մեկնել Վրաստանի ծովափնյա քաղաքներ հանգստանալու», - ասաց Ա.

Մանուկյունը:

Նրա խոսքերով, երթուղին կգործի մինչև սեպտեմբերի 15-ը, անհրաժեշտության դեպքում շարժակազմը կավելացվի: Ըստ Ի. Չոզովածեի՝ 2005թ-ին Վրաստանում հանգստացել են շուրջ 20 հազար հայաստանցի զբոսաշրջիկներ, ակնկալվում է, որ այս տարի նրանց թիվը կհասնի 50 հազարի: Եթե նախորդ տարի Բաթումի ռեստորաններում առաջին անգամ հայտնվել են հայկական ճաշատեսակներ, ապա այս տարի արդեն բացվել են հայկական ռեստորաններ: Նա կարելորեց Վրաստանի տնտեսական և մշակութային կյանքում հայերի կատարած ներդրումը և հույս հայտնեց, որ երկաթուղային հաղորդակցության վերականգնումն ավելի կամրապնդի երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունները:

«Հայկական երկաթուղու» ուղեւորափոխադրումների բաժնի պետ Սամվել Ղալեչյանի տեղեկացմամբ, Հայաստանի տարածքում գնացքը կանգ կառնի Երեւանի, Արմավիրի, Գյումրիի, Վանաձորի և Սանահինի կայարաններում: Այն Երեւանից կմեկնի ամսվա կենտ օրերին՝ ժամը 21:10 լույսին, և Բաթում կժամանի հաջորդ օրը՝ 13:40-ին: Բաթումից կմեկնի ամսվա զույգ օրերին՝ ժամը 08:35-ին, և Երեւան կհասնի 05:35-ին:

Հայկական երկաթուղու գնացքով երկտեղանոց խցիկավոր վագոնների համար տոմսը կարժեճա 18 703 դրամ, իսկ չորստեղանոցների համար՝ 9 297 դրամ: Վրացական երկաթուղու գնացքով իրականացվող փոխադրումների սակագները փոքր-ինչ կտարբերվեն: Սակայն, ըստ Ա. Մանուկյանի, վրացական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև գները համահարթեցնելու վերաբերյալ:

«Ա-320» ինքնաթիռի վթարի հետեւանքով տուժած ընտանիքներին ապահովագրավճարների տրամադրման համար փաթեթներն ուղարկվել են Լոնդոն

ԵՐԵՎԱՆ, 19 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Արմավիա» ավիաընկերության «Ա-320» ինքնաթիռի վթարի հետեւանքով տուժած ընտանիքների կողմից փոխհատուցում ստանալու համար հունիսի 18-ին լրացել է «Գրանդ» ապահովագրական ընկերությանը դիմումներ ներկայացնելու վերջնաժամկետը:

Ինչպես «Արմանպրես»-ին տեղեկացրեց ընկերության գործադիր տնօրեն Արտակ Անտոնյանը, այսօրվա դրությամբ զոհվածների հարազատների կողմից ներկայացված են անձնակազմի անդամների և 100 ուղեւորնորի հարազատների դիմումներ: Դիմողներից 87-ը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, 22-ը՝ Ռուսաստանի Դաշնության: Նա նշեց, որ մնացած 4 ուղեւորնորի հարազատներն իրենց դիմումները կարող են ներկայացնել նաև հետազայում:

ՏՆՕՐԵՆԻ

տեղեկացմամբ,

ապահովագրավճարների տրամադրման համար փաթեթներն արդեն ուղարկված են Լոնդոն, որտեղից այս շաբաթվա ընթացքում հաստատումը ստանալուց հետո հարազատների հետ կստորագրվեն վճարումներն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր: Այնուհետև 10-15 օրվա ընթացքում վճարումները կիրականացվեն:

Նրա խոսքերով դեռևս հայտնի չէ զոհվածների հարազատներից տրամադրվելիք ապահովագրավճարների գումարի չափը:

Քարի արդյունահանումը և վերամշակումը կարող է դառնալ Հայաստանի տնտեսության գերակա ոլորտներից մեկը

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանում քարի արդյունահանումը և վերամշակումը կարող է դառնալ տնտեսության գերակա ոլորտներից մեկը. դրա համար երկիրն ունի բավարար քանակությամբ ռեսուրսներ, սակայն անհրաժեշտ են համապատասխան տեխնոլոգիաներ քարերի արդյունահանումն ու վերամշակումն արդյունավետ դարձնելու համար: Այս մասին այսօր նշվեց «Քարի արդյունահանում, քարահանքերի տեխնոլոգիաներ» թեմայով միջազգային գիտաժողովի ընթացքում:

Գիտաժողովը ոլորտի ավելի քան 10 ձեռնարկությունների հնարավորություն կտա ծանոթանալու քարերի արդյունահանման և վերամշակման իտալական տեխնոլոգիաների հետ: Միջոցառմանը մասնակցում են նաև Իտալիայի 11 աշխարհահռչակ ընկերությունների ներկայացուցիչներ: ՀՀ-ում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Մարկ Կլեմենտենոն նշեց, որ այս ոլորտում երկու երկրների գործարարների համագործակցությունը հեռանկարային է և հնարավորություն կտա Հայաստանին ավելացնելու ոլորտի արտադրանքի արտահանումը և այն դարձնելու տնտեսության գերակա ուղղություններից մեկը:

ՀՀ գործարարների (գործատուների) և արդյունաբերողների միության նախագահ Արսեն Ղազարյանի խոսքերով, այս ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով հնարավոր կլինի բարձրացնել արտադրողականությունը, ինչն էլ հայկական արտադրության քարերին հնարավորություն կտա մրցակցել Իտալիայի, Թուրքիայի, Հունաստանի և այլ երկրների արտադրանքի հետ:

Ներկայումս Հայաստանից քարի արտահանման ծավալները բավական քիչ են և ՀՆԱ-ի վրա էական ազդեցություն չեն ունենում: Այդուհանդերձ, հայկական տրավերտինը, բազալտը, տուֆը, ֆերոգիտն արտահանվում են ինչպես ԱՀՊ երկրներ, այնպես էլ ԱՄՆ, Եվրոպա: Հետեւաբար՝ կան բոլոր հիմքերը կարծելու, որ քարի արդյունահանումը և

վերամշակումը կարող է դառնալ տնտեսության համար կարելորագույն ճյուղերից մեկը: Նա տեղեկացրեց նաև, որ ՀՀ գործարարների (գործատուների) եւ արդյունաբերողների միության եւ «Օլ Ստոուն» կազմակերպության միջեւ կստորագրվի պայմանագիր, որի նպատակն է շարունակել տեխնոլոգիաների ներկրումը Հայաստան, միասնաբար աշխատել իտալական խոշոր ամեւտրական կազմակերպությունների հետ Եվրոպայում ապրանքային բրենդ ներկայացնելու համար, ինչպես նաև կազմակերպել կադրերի պատրաստման աշխատանքներ իտալական համապատասխան կառույցների միջոցով:

Սգո արարողություն Սել ծովում՝ վթարված «Ա-320» օդանավի զոհերի մահվան 40 օրվա կապակցությամբ

ՍՈՉԻ, 14 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սել ծովի այն մասում, որտեղ մայիսի 3-ին վթարվեց Երեւան-Սոչի չվերթն իրականացնող «Ա-320» օդանավը, այսօր հիշատակի արարողություն կատարվեց զոհերի մահվան 40 օրվա կապակցությամբ:

Աղետի վայրում ծովն իջեցվեցին ծաղկեպսակներ, անհամար ծաղիկներ, անզամ նամակներ: Ռուսական «Դագոմիս» նավից ծովի վրա տարածվեցին հայկական դուդուկի հնչյունները, նավի շնչակներն ազդարարեցին սգո միտինգի բացումը: Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Խաչատուր Վարդանյանը, վշտակցելով զոհերի հարազատներին, նշեց, որ բազմակողմ աջակցությունն ու ընթրնումը մեղմացնում է հայ ժողովրդի վիշտը: Երախտագիտություն հայտնելով ՌԴ իշխանություններին, որոնց աջակցությամբ իրականացվեցին վթարված օդանավի որոնողական աշխատանքները, վեր հանվեցին ինքնաթիռի ինքնագիր սարքերը, նա հույս հայտնեց, որ հայ-ռուսական բարեկամական պատմության էջերում այլևս այդպիսի աղետներ չեն լինի, եւ միայն դրական իրադարձություններ կամրագրվեն: Սոչիի փոխքաղաքապետ Իգոր Յակիմչիկը քաղաքի ղեկավարության եւ բնակչության անունից ցավակցություն հայտնեց ավիաւթարի զոհերի հարազատներին: Նա նշեց, որ Սոչիի քաղաքային իշխանություններն ամեն ինչ արեցին՝ օժանդակելու որոնողական աշխատանքներին, եւ հույս հայտնեց, որ շուտով պարզ կլինեն «սել արկղերի» վերծանման արդյունքները՝ լույս սփռելով վթարի պատճառների վրա:

Հայ- վրացական եւ Հայ-ռուսական գործարար ընկերակցության համանախագահ, ԱԺ պատգամավոր Վոլոդյա Բադալյանը նշեց, որ ազգովի կիսում են ավիաւթարի զոհերի հարազատների խորը կսկիծը:

Վ.Բադալյանի ղեկավարած կազմակերպությունն է իրականացրել զոհերի հարազատների

տեղափոխումը: Նա շնորհակալություն հայտնեց Վրաստանի, Աբխազիայի եւ Ռուսաստանի իշխանություններին՝ անվտանգ երթեւեկություն ապահովելու եւ հայ ուղեւորների համար տարիներ շարունակ փակ սահմանը բացելու համար: Սոչիում ՀՀ հյուպատոս Վարդան Ասոյանը նշեց, որ երկրորդ «սել արկղի» վերծանման հանձնաժողովը շարունակում է աշխատանքը Մոսկվայում, որից հետո միայն կիրաւարակվեն կատարված եզրահանգումները: Հոգեհացի արարողությունից հետո Աղլերի Սբ Սարգիս եկեղեցում պատարագ մատուցվեց ավիաւթարի զոհերի հոգիների հանգստության համար: Եկեղեցու բակում Մեծ Եղեռնին նվիրված խաչքարի կողքին տեղի ունեցավ «Ա-320» օդանավի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողի հիմնարկեքը, որի ժամանակ ծաղկեպսակներ դրվեցին ՀՀ նախագահի, Ազգային ժողովի եւ կառավարության անունից:

Հիշեցնենք, որ վթարի հետեւանքով զոհվեցին օդանավում գտնվող 113 անձինք, այդ թվում՝ անձնակազմի ութ անդամները, 6 երեխաներ, 77 ՀՀ, 28 ՌԴ, մեկ Ուկրաինայի, մեկ Վրաստանի քաղաքացիներ: Գտնվեցին միայն զոհերից 51-ի մարմինները, հինգի ինքնությունը չիաջողվեց պարզել, նշանակվեց գենետիկական փորձաքննություն, որի արդյունքները պարզ կդառնան երեք ամիս անց:

Էդվարդ Միրզոյանին շնորհվեց ՀՀ ԳԱԱ «Ոսկե մեդալ» շքանշան

ԵՐԵՎԱՆ, 16 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մեծանուն կոմպոզիտոր, ՀՀ եւ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Էդվարդ Միրզոյանին այսօր շնորհվեց ՀՀ ԳԱԱ բարձրագույն պարգեւ՝ «Ոսկե մեդալ» շքանշան եւ դիպլոմ՝ հայկական երաժշտության զարգացման մեջ անփոխարինելի ավանդի համար: «Էդվարդ Միրզոյանն իր երաժշտությամբ եւ ողջ գործունեությամբ փառք ու պատիվ է բերել մեր ժողովրդին», - նշեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Կոմպոզիտորը մոտ 40 տարի ղեկավարել է Հայաստանի կոմպոզիտորների միությունը, եւ, նրա խոսքով, հենց այդ շրջանում մեր երաժշտական բնագավառն ապրել է աննախադեպ վերելք: «Նրա ստեղծագործությունները հարստությունն է, որը միշտ մնալու է մեր ժողովրդին», -ասաց Ռ. Մարտիրոսյանը:

Է. Միրզոյանն արժանացել է բազմաթիվ միջազգային մրցանակների, նրա ստեղծագործությունները բազմիցս հնչել են աշխարհի տարբեր երկրներում՝ բարձր պահելով հայ երաժշտական արվեստի համբավը: Ինչպես նշեց արվեստաբանության դոկտոր Աննա Արեւշատյանը, Հայրենական մեծ պատերազմից հետո հայկական երաժշտության մեջ հայտնվեցին

այնպիսի կարկառուն ստեղծագործողներ, ինչպիսիք են Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Չարությունյանը, Ադամ Խուդոյանը, Ղազարոս Սարյանը, Էդվարդ Յովհաննիսյանը, որոնց իրավամբ կարելի է անվանել հայկական երաժշտության «նեո դասականներ»:

Նրանց կողքին իր ուրույն տեղն է գրավում է Միրզոյանը, որի արժեքավոր եւ նշանակալից ստեղծագործական ժառանգությունը ոգեշնչել է ոգեշնչում է նոր սերունդներին: Նրա ստեղծագործություններից «Լարային կվարտետը», «Թավջութակի համար սոնատը», «Սիմֆոնիան», «Շուշանիկը» էլեգիան, «Դաշնամուրային պոեմը» եւ «Պոեմ-էպիտաֆիան» բեկումնային են եղել հայ երաժշտության զարգացման համար:

Երեւանում կանցկացվի «Մշակութային ժառանգության պահպանման բարելավումն օրենսդրական դաշտի կատարելագործմամբ» խորագրով տարածաշրջանային սեմինար

ԵՐԵՎԱՆ, 15 ՅՈՒՆԻՍԿՈՒ ԱՐՄԵՆԴՐԵՍ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովը Երեւանում հունիսի 16-17-ը կանցկացնի «Մշակութային ժառանգության պահպանման բարելավումն օրենսդրական դաշտի կատարելագործմամբ» խորագրով տարածաշրջանային սեմինար:

Ինչպես «Արմենպրես»-ին հայտնեցին ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից, սեմինարը կընդգրկի շահագրգիռ բոլոր հաստատությունների եւ ծառայությունների ներկայացուցիչներին, այդ թվում՝ ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության, հուշարձանների պահպանության գործակալության, քաղաքապետարանի, ICOMOS-ի (Հուշարձանների եւ Տեսավայրերի միջազգային խորհուրդ) հայկական կոմիտեի, տարածքային կառավարման եւ մշակութային ժառանգությամբ զբաղվող մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Որպես գլխավոր զեկուցող սեմինարին հանդես կգա Համաշխարհային ժառանգության կենտրոնի եւ ICOMOS-ի փորձագետ պրոֆ. Ռեյչիլ Միշելմորը, Վրաստանի եւ Իրանի ICOMOS-ի ներկայացուցիչները, ինչպես նաեւ Ռուսաստանի եւ Ուկրաինայի փորձագետներ:

Իրանը մերժում է միջուկային ծրագրի շուրջ բանակցությունների ցանկացած նախնական պայման

ԹԵՀՐԱՆ, 19 ՅՈՒՆԻՍԿՈՒ ԱՐՄԵՆԴՐԵՍ: Իրանը մերժում է միջուկային ծրագրի շուրջ բանակցությունների ցանկացած նախնական

պայման, կիրակի օրը լրագրողներին հայտնել է Իրանի արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Համիդ Ռեզա Ասեֆին:

«Իրանական միջուկային հիմնախնդրի լուծման միակ ճիշտ ուղին բանակցություններն են: Բանակցությունները պետք է լինել բաց ու առանց նախնական պայմանների», -ասել է Ասեֆին: «Բանակցությունների նախնական պայմանները սահմանում են բանակցային գործընթացի շրջանակները, իսկ դա կարող է արդյունքի չբերել», - ավելացրել է նա:

Ասեֆին լրագրողներին հայտնել է, որ ներկայումս Իրանում շարունակվում է իրանական միջուկային հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ «վեցյակի» առաջարկությունների փաթեթի ուսումնասիրումը: «Առաջարկությունների փաթեթն ուսումնասիրելու համար հատուկ կոմիտեներ են ստեղծվել Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության եւ Ազգային անվտանգության գերագույն խորհրդի ներկայացուցիչների մասնակցությամբ», -ասել է իրանցի դիվանագետը: Նա ավելացրել է, որ նշված առաջարկությունների մանրագնին ու լուրջ քննարկումից հետո Իրանը կհայտարարի դրանց նկատմամբ իր դիրքորոշման մասին:

Եվրամիությունը կոչ է արել Թեհրանին՝ արագ ու դրական պատասխան տալ իրանական միջուկային հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ նոր առաջարկություններին

ԲՐՅՈՒՍԵԼ, 16 ՅՈՒՆԻՍԿՈՒ ԱՐՄԵՆԴՐԵՍ: Եվրամիության անդամ երկրների պետությունների ու կառավարությունների ղեկավարները, որոնք մասնակցում են Եվրամիության Բրյուսելում ընթացող գագաթաժողովին, կոչ են արել Թեհրանին՝ «արագ» ու «դրական» պատասխան տալ իրանական միջուկային հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ նոր առաջարկություններին:

Առաջարկությունների փաթեթը հունիսի սկզբին Թեհրան էր ուղարկվել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամների եւ Գերմանիայի կողմից: Միջուկային նյութերի հարստացման աշխատանքներից Իրանի հրաժարվելու փոխարեն «վեցյակի» երկրներն առաջարկել են ընդգրկում տնտեսական համագործակցություն, ինչպես նաեւ քաղաքական փոխգործակցության տարրեր:

Այսօր Եվրամիության գագաթաժողովում քննարկվող փաստաթուղթը նաեւ կոչ է բովանդակում Իրանին՝ «պայմաններ ստեղծել բանակցությունների վերսկսման համար»: